ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 70

«21» հունվարի 2026թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի,
Շահումյան փողոց 2
Հեռ. (0262) 4 60 60
Էլ. փոստ՝ info@martuni.am

« ԾԻՐԱՆ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մարգարյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ըստ Մարտունու համայքնապետարանի և «Ծիրան Մարկետ» ՍՊԸ-ի միջև կնքված ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-1 պայմանագրի և ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերի՝ «Ծիրան Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գեղարքունքի մարզի Մարտունի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն հանդիսացող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին 2026թ. հունվարի 7-ից պետք է մատակարարվեր ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով գնման ընթացակարգով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող որակյալ սննդամթերք, մինչդեռ «Ծիրան Մարկետ» ՍՊԸ-ն նախադպրոցական ուսումնական հաստատություններին ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-1 պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքը (հաց) մատակարարել է հին, բորբոսնած (առկա են համապատասխան լուսանկարները)՝ առանց հաց տեղափոխող մեքենայի սանիտարական անձնագրի և վարորդի սանիտարական գրքույկի:

Հավելեմ նաև, որ նշված պայմանագրի 2.1.8 կետին համապատասխան Մարտունու համայնքապետարանը 2026 թվականի 12 հունվարի N 16 ելից գրությամբ «Ծիրան Մարկետ» ՍՊԸ-ին տեղյակ էր պահել հայտնաբերված թերությունների մասին և պահանջել ողջամիտ ժամկետներում վերացնել դրանք, սակայն «Ծիրան Մարկետ»

ՍՊԸ-ն մինչ օրս դա չի կատարել, և շարունակաբար փորձ է արվում 1-ին չափաբաժնով նախատեսված հաց մատակարարել՝ առանց համապատասխան մեքենայի և վարորդի սանիտարական գրքույկների:

Առաջնորդվելով ՀՀ օրենսդրության պահանջներով, և հաշվի առնելով կնքված պայմանագրի 2-րդ կետի 2.1.7 ենթակետը, Մարտունու համայնքի ղեկավարը միակողմանիորեն լուծում է 04.12.2025 թվականին կնքված ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-1 ծածկագրով պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով, համապատասխանաբար համարելով դրանք լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Համաձայն ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-1 ծածկագրով պայմանագրի 6-րդ կետի 6.3 ենթակետի՝ պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

Տեղեկացնում եմ, որ «Ծիրան Մարկետ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները փոխանցել Մարտունու համայնքապետարանի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900145001484 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Շահումյան 2 հասցեով՝ մինչև սույն թվականի հունվարի 26-ը ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ « Ծիրան Մարկետ » ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմնին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ եթե մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և /կամ/ որոկավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացվում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և /կամ/ որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները չվճարելու դեպքում Մարտունու համայնքապետարանը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

Կատարող՝ Մանե Հարությունյան
ԿՄՍԵ հարցերի բաժին
Հեռ. (0262) 4 60 60